

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան ցինը 10 րուր: կէս տարւանը 6 րուր:

Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանատիպ մէջ:

Օտարապաշտարացի դիմում են ուղարկել

Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է առն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր րատին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

Դարձեալ մի ապացոյց.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին, Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Գերմանիա, Նամակ թերթիկային: Արաքսի լուրեր: —ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՊԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Մի նամակ նախկին ռուսացի իր ընկերոջ:

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ԱՊԱՅՈՑՑ

Միջազգային հեռագրական ընկերութեան միջոցով Կ. Պոլսից մեզ հաղորդված այսօրվայ հեռագիրը դարձեալ մի նոր ապացոյց է որ Թիւրքիան պէտք ունի բարեկարգութեան: Թիւրքացի Հայաստանում, էրզրումի կողմ, յայտնվել է մի հիւանդութիւն որ ժանտախտին նման է: Նոյն լուրը հաստատում է տեղական մի ռուս թերթի բաժնուկի թղթակիցը:

Երբ որ մենք տարինորով կրկնել ենք որ Թիւրքիան կարօտ է վերանորոգութեան, մեր այդ խօսքերը մենք հիմնել ենք այն ճշմարտութեան վրա, որ մի երկիր պէտք է բարեկարգվի ոչ թէ միայն իր համար, բայց և իր հարեան երկրների շահերը աչքի առաջն ունելով և մինչև անգամ ընդհանուր մարդկութեան երջանկութեան համար:

Ինչ է պատճառը որ մենք երբեք չենք լսում որ խօչքա, կամ ժանտախտ, կամ այլ որևէ սարսափելի ախտ յայտնվել եւրոպական երկրներից մինում: Ծերունիայում, Գերմանիայում, Իտալիայում և այլն, բայց այդ ցաւերը միշտ յայտնվում են մահամետական երկրներում: Ի՞նչ է սրա պատճառը, ասում ենք մենք:

Վարակիչ ախտերի աղբիւրը միշտ լինում է մի երկրի սնտեսական անբարեկարգութիւն, մարդկանց կենսական անհոգութիւն, վարչական անտարբերութիւն, ժողովրդի անմաքուր, վատառողջ կենսի և կենսական ամբողջ աղքատութիւն, նրա ճնշված, ստորացրած, ստիպյալ դրութիւն,

մի խօսքովայն բոլորը, որ արգելք է դնում մի ազգի ինքնագործունէութեան, ժողովրդի ազատ, բարոյապէս և նիւթապէս առողջ, բնական զարգացման:

Իսկ մահամետական երկրները իրանց բարոյական կենսքով, իրանց մտաւոր և տնտեսական անշարժութեամբ, իրանց կառավարչական կենսքի անհոգ կազմակերպութեամբ՝ նպաստում են ժողովրդի մէջ աղքատութեան, անմաքուր կենցաղավարութեան, կեղտի զարգացմանը:

Արաքսի, Պարսկաստան, Թիւրքիա,—ահա ամեն տեսակ ախտերի, խօչքայի, ժանտախտի մշտական աղբիւրները: Տարին չէ անցնում որ մենք չը կարգայինք լրագիրներում թէ խօչքան յայտնվել է Մէկ-կայում, ժանտախտը Բաղդադում, մի այլ ցաւ էլ Պարսկաստանի այս կամ այն քաղաքում...

Եւ եւրոպան դեռ ևս յապաղում է հաստատութեամբ պահանջել որ մահամետական երկրները վերջապէս բարեկարգվեն, չը նայելով որ շատ լաւ է հասկանում որ մի երկրի վարչական անկարգ դրութիւնը, նրա կուլտուրական ստոր աստիճանը թէ նոյն իսկ այն երկրի համար գոգադրութիւն է, թէ նրա հարեան երկրների և թէ ամբողջ մարդկութեան համար ամեն տեսակ վտանգներ է ներկայացնում:

Եւ դեռ գտնվում են եւրոպայում դիպլոմատներ, որոնք ապտանում են արդեօք կարելի է Թիւրքացի Հայաստանի համար ինքնավարութիւն պահանջել, առանց վերաւորելու երկրի մահամետական աղքատութեան կազմում Հայաստանում, չը նայելով որ հազար անգամ ճիշդ լինում ենք որով ապացուցված է թէ Թիւրքացի Հայաստանում քրիստոնէայ տարրը երկրի ազգաբնակչութեան խոշոր մեծամասնութիւն է կազմում: Գեռ գտնվում են, ասում ենք, դիպլոմատներ, որոնք իրանց խելքով քաղաքագիտութիւն և զգուշութիւն են բանեց-

նում, առաջարկելով նշանակել Հայաստանում մահամետական զինաւոր նահանգապետ:

Ասէք խնդրեմ, ի՞նչ միտք ունեն այդ տեսակ դիպլոմատներում քաղաքագիտութիւն, քաղաքական զգուշութիւններ և այդպէս անուանված խոհեմութիւններ, երբ մահամետական երկրները իրանց անբարեկարգ դրութեամբ, իրանց անշարժութեամբ, դէպքի քաղաքակրթութիւնը իրանց թշնամութեամբ՝ մշտական վտանգի աղբիւր են ներկայացնում ոչ թէ միայն իրանց հպատակ քրիստոնէայ ազգերի համար, ոչ թէ միայն հարեան երկրների համար, բայց և ամբողջ մարդկութեան համար: Եւրոպան յապաղում է մտնել տալ վերանորոգութիւնները, իրաւորել տալ ինքնավարութիւնը Հայաստանում, լուծել, վերջապէս, հայոց խնդիրը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ առնել անշարժ մահամետականների ձեռքից նահանգի ներքին վարչական ղեկը և տալ նրան քաղաքակրթութեանը աւելի ընդունակ քրիստոնէաների ձեռքը,—իսկ այդ ժամանակ նոյն Հայաստանում, մահամետական տարրի շնորհով, ծնվում է ժանտախտը, որ սպառնում է անցնել հարեան երկրները և այնուհետեւ ամբողջ եւրոպա և հնձել անողորմաբար մարդկութեան մի երրորդ մասը...

Ապացուցված է, հազար անգամ ապացուցված է, որ Թիւրքացի Հայաստանի քրիստոնէայ ազգաբնակչութիւնը անհամեմատ աւելի բաղնալի է, քան թէ նոյն երկրի մահամետական տարրը, բայց եթէ հակառակն էլ լինէր, եթէ քրիստոնէաները փոքրամասնութիւն էլ կազմէին, այնու ամենայնիւ, աչքի առաջն ունելով ընդհանուր մարդկութեան օգուտն ու ապահովութիւնը, եւրոպան, քրիստոնէայ եւրոպան, պէտք է ներքին վարչական ոյժը Թիւրքացի այլ և այլ նահանգներում առնէր անընդունակ մահամետականների ձեռքից և յանձնէր իրան կրօնակից քրիստոնէաների ձեռքը: Միթէ քրիստոնէաների պաշտպանելը ար-

դէն յանցանք է համարվում քրիստոնէայ եւրոպայի աչքում:

Եթէ եւրոպան չէ կամենում պաշտպան հանդիսանալ Թիւրքացի քրիստոնէաների, նոյն իսկ յօգուտ այդ քրիստոնէաների, եթէ չէ կամենում լուծել հայոց խնդիրը նոյն իսկ Հայաստանի օգտի համար,—գոնէ շտապէր բարեկարգել Հայաստանը իրան համար, եւրոպացիների համար, ստիպել Թիւրքիային խնայարկել քաղաքակրթութեանը ամբողջ մարդկութեան օգտի համար, որպէս զի մահամետական երկրները վերջապէս դադարէին լուսաւորված աշխարհի համար սարսափելի վտանգի ախտերի մշտական վտանգի աղբիւր ներկայացնել...

Աստուած չանի որ ժանտախտը, որ այժմ սպառնում է մեր կովկասեան սահմաններին, անցնի եւրոպական քաղաքակրթ երկրներին էլ: Բայց եթէ այդ պատահի, եթէ մահամետական երկրներից մի գեղեցիկ օր ժանտախտը անցնի Վիեննա, Բեռլին, Փարիզ, Լոնդոն,—եւրոպայի միայն այն ժամանակ եսական եւրոպան կը հասկանայ որ ժամանակ է արդէն ստիպել Թիւրքիային և Պարսկաստանին քաղաքակրթվել, ժամանակ է պարտաւորեցնել նրանց բարեկարգել իրանց քրիստոնէայ նահանգները, ժամանակ է, ուրեմն, վճռել և հայոց խնդիրը, ժամանակ է յանձնել այդ երկրների բնիկ քրիստոնէաներին իրանց երկրի ներքին վարչութեան ղեկը:

Երեւի միայն այն ժամանակ երբ շքեղ Վիեննան, եսական Բեռլինը, միջազգային հպարտ Փարիզը և բանաստեղծական Լոնդոնը իրանց դռների առջև կը անհնձ մահամետական աշխարհի արդիւնքը, ժանտախտի հրէշը,—այն ժամանակ միայն կը հասկանան որ պէտք է վերջապէս խնայարկեցնել Թիւրքիային եւրոպական քաղաքակրթութեանը, պէտք է վճռել հայոց խնդիրը, քանի որ այս րօպէին խեղճ Հայաստանն է, որ մահամետական կուլտուրայի շնորհով,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՆԱՄԱԿ ՆԱԽԿԻՆ ՈՒՍԱՆՈՂԻՑ ԻՐ ԸՆԿԵՐՈՋ

Թշուառ ընկորդ դրութիւնը կամօս իմանալ, Լսիր ուրեմն: Լսիր ուշադրութեամբ, որովհետեւ իմ քաջած օրերը քեզ էլ են սպասում, եթէ միայն բաղդը մի հրաշքով քեզ չէ հարստացրել: Գրում եմ քեզ մի յետ ընկած, անիծված գիւղից: Կէս գիշեր է, սարսափելի մութ և այնպիսի մառախուղ, որ երկու քայլում ոչ ոքի չէ կարելի տեսնել: Այս րօպէին ամբողջ աշխարհը պարունակվում է ինձ համար իմ անուշ սենեկի մէջ.—նրանից դուրս ոչինչ չէ երևում: Ցուրտ է, խոնավ, անձրի կաթիլները խիտում են անդադար լուսամուտիս ապակիներին: Ժամանակ

առ ժամանակ օրոտում է ամպը և նրա գոռոցը արձագանք տալիս հօրիզոնի վրա բարձրացող ձիւնապատ լեռներում: Սեղանս քաջած վառարանի մօտ, իմ անբաժան ընկեր-պիղծ գցած ուսերիս, ձխախտ ձխախտի յետեւից քաշելով գրում եմ տողերս: Սենեկում մենակ եմ: Գործավարիս մօտակայ գիւղն եմ ուղարկել, իսկ ծառայիս իրաւունք եմ տուել քնելու, որ իր միակերպ տեսքով և խօսքերով ինձ չը յուսահատացնի: Կարող ես ուրեմն երևակայել հոգեկան տրամադրութիւնս: Որ աւելի լաւ հասկանաս այդ, ես կաւեկացնեմ, որ սենեկիս կից գտնվող գոմի մէջ մօտ քսան խող այնպիսի սարսափելի ձվոց ու խուլոց են բարձրացրել, որ քիչ է մնում հոգիս դուրս քաշն տեղից:.. Հեռու անիւս, սարսափելի իրականութիւն: Հեռացրու ինձից դաժանելի պատկերը, թող գէթ մի րօպէ մտաւորապէս լին առնեմ ու թռչեմ այն ուկեայ աշխարհ: Բայց ապրում եմ ուսանողները, որից զրկվեցի ես յաւիտենապէս, որի պատճառի պատկերը միշտ վառ կը մնայ սրտիս մէջ...

«Ի՞նչ ես անում այդ գիւղում, թշուառ կանչ,—կը հարցնես դու անուշտ: Դժբախտ եմ—կը լինի պատասխանս, և ճիշդ լոգիկա յով ամենաբաղդաւոր մարդն եմ, որովհետեւ առաջինս եմ այսպէս: Ամբողջ օրերով գրում եմ

կամ հին գործերը կարդում և միշտ բարկացած քայլում սենեկումս: Երկու ամիս է այստեղ եմ և այդ միջոցում ես մի մարդ անգամ չեմ տեսել, որի հետ կարողանայի խօսել, ի հարկէ այս խօսքի լայն նշանակութեամբ: Կարծես անասուններ լինեն չորս կողմումս միմյանի ֆիզիքական պահանջներով—ուտել, խմել, աշխատել ու քնել և միւս օրը դարձեալ նոյնը կրկնել: Խօսելու, մտածելու գոնէ երգելու ընդունակութիւն էլ չունեն այս թշուառները: Միայն լաւ ուշուց տալ գիտեն, Գողթոց էլ գերադասել փորձելի անցնել օրը խօսակցութիւն սկսել իմ տանտիրոջ հետ, որ մի սպիտակամաշ ձերուկի է, բայց այս տնապանդն էլ խօսելու տեղ մի քանի հարկը խօսք ծամեց, տրոհեց բերնումը ու թողեց. ես ոչինչ չը հասկացայ: Լսում էի երբեմն մի քանի խօսք՝ «Երանար», «Էլիկը», «Հօշոտը» և հասկանում էի, որ հին բաներ է պատմում: Իմ հարցիս ժողովրդի դրութեան մասին նա տուեց մի տարօրինակ պատասխան՝ Լսի չի, աղա, լեւա եւ իրանց մար, լոխ էլ ամալար ունեն, չայ են խմում:» Ես սարսից յետոյ, ինչպէս ասում են махнулъ pyкoм և մի քանի բառակ ժողովրդի դրութիւնը արտայայտող հեղուկից խմացնելով նրան ծանապարհ դրի: Կենսքս փոխվել է բոլորովին, սիրելի ընկեր:

Այն ինչ սրանից մի քանի ամիս առաջ երբ ուսանող էի, գիշերը մինչև 2 ժամը նստած ընկերական չըջանում խօսում էինք, դատում, վիճում, երգում, խմում—այստեղ միայնութիւնից չըջնելով պարկում եմ—horribile dictu!—9 ժամին և վերկենում 5-ին «էն բաշտէն» ինչպէս ասում է ժողովուրդը: Ուղիղ աբորի կենսք եմ քաշում՝ նրանք «թառ» լինելիս, ես էլ եմ պարկում և նրանց առաւօտեան ուրախ ծուկուկուկի հետ ես, գիշերը մի քանի յիմար երազ տեսած, ունեքիս կիսած, վեր եմ կենում և ամբողջ օրը լուսն ու մուշկ պարսպում: Երբեմն միայն երգում եմ ազաւակ ձայնով այս կամ այն օպերայի կտորները, որ քիչ չէ զարմացնում իմ թուրք եսակուլին: Կաղրած ժամանակը երբեմն դուրս եմ գալիս տանից, որ մաքուր օդ ծծեմ: Օղբ իրաւ որ մաքուր է, հրաշալի, բնութիւնը սքանչելի՝ լայնատարած դաշտեր ձիւնապատ սարերով չըջապատած... Բայց ես մարդ եմ որոնում, մարդ. բնութիւնը առանց մարդի—ոչինչ էլ պակաս է: Ի հարկէ, չէ կարելի տեսել, որ այստեղ մարդ չը լինի, բայց... Լսիր: Այն ինչ ուսանող եղած ժամանակը ամենայն մի րօպէ ականջի եր ընկնում՝ «Կարգացիր աշտօրուս Դոստէ-ի յօղուածը», կամ «որքան գեղեցիկ է Գամբատայի ճառը»,—այստեղ դրանց փոխարէն լսում եմ

на 1882 годъ

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго